

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— ՔԵՆՏՐՈՒՅԹԻ ԵԿԵՂԵԾՈՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ ԳՈՒԺԴԱ-
ՐՈՒԵԼ է սեպտեմբերի 27—30, ն. ա., Ա.յդ 50-րդ ժողովն է։
Անգլիական ազգայի եկեղեցականների խւրաքանչիւր տարի
գուժարւող այս ժողովների յիսնամեռայ յօթելեանը առիթ
եղաւ հոետորներին իրանց ճառերում, թէ ժամերգու-
թեան և թէ համաժողովի բացմանը ակնարկ ձգել անցած
ժամանակի վերայ և անցեալից գաս առնել։

Ճառեր խօսել են Յեօրքի արքեպիսկոպոսը, որ ցոյց
տուեց Համաժողովների բարոյական ազդեցութիւնը եկեղեցական կեանքի վերաբերութեամբ։ Այդ տեսակ ժողովներում, ասաց նա, զանազան հայեացների տէր մարդիկ գէմ՝ յանդիման գալսվ, պարզում են իրանց մաքերը գէպի եկեղեցին՝ ընդհանուր սիրով և Համերաշխութեամբ համակուած։ Այս բանի շնորհիւ հնումն այնպէս խիստ որոշ ուղղութիւնները, որ եկեղեցում յայտնի էին «բարձր», «ստոր» «լայն» եկեղեցիներ յորջօրջմամբ, այժմ զդալի կերպով սկսել են միաձուլուեր։

Եկեղեցական կեանքում՝ այս համակցութիւնը զարդացնելու համար, եպիսկոպոսը անհրաժեշտ է համարել ինքնավարութեան զարգացումն, կարգի ու կարգապահութեան զօրացումն, առ եկեղեցին պարտաւորութիւնների աւելի խոր հասկացողութիւն և միութեան աւելի ջերմ հոգի։ Եկեղեցու առ պետութիւնն յարաբերութեան մասին հուետորը յայտնեց, որ ներկայ հանգամանքում՝ այդ յարաբերութիւնը պէտք է վերակազմել ոչ թէ նոր օրէնքներով, այլ փոխադարձ խորին յարգանքով իրաքանչիւրը իւր կարգում . . .

Համաժողովի ծրագիրն է, վերահսկողութիւն ընդհանուր աղօթագրքերի, տանը և գպրոցում կրօնական գառտիարակութեան, եկեղեցու միութեան, և ոչ-եպիսկոպոսական հասարակութեան հետ յարաբերութեան վերաբերյալ... .